ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա», «Առողջ ապրելակերպ և անվտանգ կեսագործունեություն» առարկաների մեթոդական միավորման նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի սեպտեմբերի 4-ին: Նիստին մասնակցել են մասնախմբի բոլոր 13 անդամները:
Մասնակցողների անուն, ազգանուն

1. Մարգարիտա Հակոբջանյան
2. Լուսինե Հովհաննիսյան
3. Հայարփի Մինասյան
4. Արևիկ Խաչատրյան
5. Տատյանա Սարգսյան
6. Հասմիկ Հակոբյան
7. Հասմիկ Ավանեսյան
8. Սոնա Պողոսյան
9. Քնարիկ Խաչատրյան
10. Սուսաննա Գորգինյան
11. Արմինե Նիկողոսյան
12. Ալմաստ Մելքոնյան
13. Լուսինե Խաչատրյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
2. Նախորդ մեթոդական միավորման նիստի որոշումների կատարման մասին քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
3. Ուսումնական պլանով առարկային հատկացված ժամերի և առարկայի ծրագրի հիման վրա ՄՄ անդամ ուսուցիչների կողմից առարկաների թեմատիկ պլանների ձևավորում և մեթոդական միավորման նիստում հավանության արժանանալուց հետո ԴԿՏՀ-ում լրացման հարցը (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան)

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 4-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված երեք հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները: Ընդգծվեց, որ օրակարգում ընդգրկված հարցերն ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, մեթոդական աշխատանքների համակարգմանը և առաջադրված խնդիրների համատեղ քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 2

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց նախորդ՝ 2026 թվականի օգոստոսի 27-ի նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման ընթացքը՝ անդրադառնալով օրակարգում ընդգրկված հարցերից բխող աշխատանքների իրականացմանը:

Նշվեց, որ նախորդ նիստի օրակարգով նախատեսված աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետներում, իսկ ընդունված որոշումների կատարման գործընթացը կազմակերպվել է համապատասխան ուղղություններով:

ՄՄ քարտուղար Լ. Հովհաննիսյանը ներկայացրեց նիստի արձանագրության կազմման և էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ արձանագրությունը կազմվել և ներկայացվել է սահմանված երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Մեթոդական միավորման ղեկավարը տեղեկացրեց, որ գործող իրավական ակտերի և ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերի հիմնական պահանջները ներկայացվել են ՄՄ անդամներին: Ուսուցիչները ծանոթացել են ներկայացված փաստաթղթերին և իրենց աշխատանքը կազմակերպել դրանց պահանջներին համապատասխան:

Անդրադարձ կատարվեց 2026–2027 ուսումնական տարում փոխադարձ դասալսումների և ՄՄ ղեկավարի կողմից իրականացվող դասալսումների կազմակերպմանը: Նշվեց, որ տվյալ հարցի վերաբերյալ առաջարկությունը ներկայացվել է մանկավարժական խորհրդի քննարկմանը և արժանացել հավանության: Դասալսումների իրականացումն ու արդյունքների արձանագրումը կազմակերպվելու են մեթոդական միավորման 2026 թվականի օգոստոսի 27-ի նիստի թիվ 1 արձանագրության 4-րդ որոշմամբ սահմանված կարգով:

ՄՄ ղեկավարը ներկայացրեց դասաժամերի նախնական բաշխման վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով, որ ուսումնական ծանրաբեռնվածությունը բաշխվել է նախնական դասաբաշխման համաձայն՝ հաշվի առնելով ուսուցիչների մասնագիտական ռեսուրսները և դասարանների կրթական առանձնահատկությունները:

Ներկայացվեց նաև դասի պլանի կազմման և ներկայացման միասնական ձևաչափի կիրառման վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ մանկավարժական խորհրդի կողմից հաստատված ձևաչափը կիրառվելու է ուսումնական գործընթացում, և ուսուցիչները դասերին պետք է ներկայանան նախապես կազմված դասի պլանով: Ընդգծվեց, որ պարբերաբար իրականացվելու է մեթոդական վերահսկողություն՝ դասի պլանների առկայության, կազմման և կիրառման պահանջների պահպանման նկատմամբ:

ՄՄ ղեկավարը ներկայացրեց ամփոփիչ գնահատման նպատակով ուսուցիչների կողմից ընտրված գնահատման ձևերի և մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ մանկավարժական խորհուրդը հավանության է արժանացրել մասնախմբի կողմից ներկայացված գնահատման ձևերը, մեթոդներն ու իրականացման հաճախականությունը:

ԼՍԵՑԻՆ 3

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց առարկայական թեմատիկ պլանների մշակման, քննարկման և ԴԿՏՀ համակարգում մուտքագրման ընթացակարգը: Նշվեց, որ մանկավարժական խորհրդի՝ սեպտեմբերի 1-ի նիստում տրված հանձնարարականի համաձայն՝ անհրաժեշտ էր ապահովել թեմատիկ պլանների համապատասխանությունը ուսումնական պլանով առարկաներին հատկացված ժամաքանակին և առարկայական ծրագրերի պահանջներին, ինչպես նաև կազմակերպել դրանց միասնական ձևավորումն ու մեթոդական միավորման նիստում քննարկումը:

Մեթոդական միավորման անդամ ուսուցիչները տեղեկացրին, որ վերանայել և լրամշակել են իրենց առարկաների թեմատիկ պլանները՝ հիմք ընդունելով ուսումնական պլանով սահմանված ժամաքանակը և առարկայական ծրագրերը: Քննարկման ընթացքում առանձին կետերի վերաբերյալ տրվեցին անհրաժեշտ պարզաբանումներ և առաջարկություններ, որոնց հիման վրա թեմատիկ պլանները վերջնականացվեցին:

Լսելով 2026 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի՝ երեք հարցից բաղկացած օրակարգը: Նիստն անցկացնել հաստատված օրակարգին համապատասխան: Ապահովել օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների իրականացումը սահմանված ժամկետներում: Կատարման ընթացքի վերահսկողությունը վերապահել մեթոդական միավորման ղեկավարին:
2. Նախորդ՝ 2026 թվականի օգոստոսի 27-ի նիստի որոշումների կատարման աշխատանքները համարել իրականացված սահմանված ժամկետներում. Ընդունել ի գիտություն, որ նախորդ նիստի որոշումների կատարման շրջանակում մանկավարժական խորհրդի նիստում պատշաճ կերպով ներկայացվել են նախնական դասաբաշխման, սովորողների գնահատման համար մասնախմբի կողմից ընտրված ձևերի և մեթոդների, դասալսումների կազմակերպման, ինչպես նաև դասի պլանի մշակման

միասնական ձևաչափերի վերաբերյալ առաջարկությունները: ՄՄ անդամ ուսուցիչներն ուսումնասիրել են կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը և իրենց աշխատանքը կազմակերպել դրանց պահանջներին համապատասխան: Նիստի արձանագրությունը կազմվել և ներկայացվել է սահմանված ժամկետում:

3. Հիմք ընդունելով ՄՄ անդամների և ղեկավարի ելույթները և ղեկավարվելով ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով հաստատված Հավելված N 2 12-րդ կետի պահանջներով՝ հավանություն տալ մեթոդական միավորման անդամ ուսուցիչների կողմից ներկայացված և քննարկման արդյունքում վերջնականացված առարկայական թեմատիկ պլաններին:
4. Թեմատիկ պլանների՝ ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի պահանջներին համապատասխանության վերահսկողությունը վերապահել մեթոդական միավորման ղեկավարին:

Արվեստ և արհեստ, Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն առարկաների առարկայական մասնախմբի ղեկավար՝ ——————————— **Մ. Հակոբջանյան**

Քարտուղար՝ ——————————— **Լ. Հովհաննիսյան**

08.09.2026